«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
ոստիկանության գնդապետ
Մ.Մուրադյան

«09» 02. 2022թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի 2021 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում կրթահամալիրի ինը ծառայող և մեկ ուսանող մասնակցել են ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի, Բելառուսի Հանրապետության ՆԳՆ Մոգիլյովի, Ղազախստանի Հանրապետության ՆԳՆ Ալմաթայի և Կարագանդայի, ՌԴ ՆԳՆ Կառավարման և Վոլգոգրադի ակադեմիաների, ինչպես նաև Չինաստանի ազգային անվտանգության համալսարանի կողմից կազմակերպված առցանց և հեռակա կարգով անցկացված համաժողովներին և այլ միջոցառումներին:

Հոկտեմբերի 10-15 Կրթահամալիրի ինը ծառայողներ գործուղվել են Չեխիայի Հանրապետություն և մասնակցել «Դեպքի վայրի զննություն» թեմայով վերապատրաստման դասընթացի:

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից իրականացվել են նաև հետևյալ աշխատանքները.

- Համագործակցության արձանագրություն է ստորագրվել ՀՀ Ազգային անվտանգության ծառայության գիտաուսումնական կենտրոնի և ՌԴ ՆԳՆ Օրյոլի իրավաբանական ինստիտուտի և Ուկրաինայի ՆԳՆ Օդեսայի պետական համալսարանի հետ:
- Հուլիսի 6-ին և 13-ին նախատեսված «Թմրամիջոցների վտանգներին հակազդելը տեղեկատվական տիրույթի գլոբալիզացիայի պայմաններում հիմնախնդիրները և հեռանկարները» ու «Կոռուպցիայի հակազդման քրեաիրավական, քրեադատավարական և կրիմինալոգիական հիմնախնդիրները» թեմաներով միջազգային գիտագործնական առցանց համաժողովների կազմակերպչական աշխատանքները:
- Հունիսի 1-ից 3-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրում անցկացված ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերի հատուկ նշանակության կազմավորումների ներգրավմամբ «Գրոմ-2021» հատուկ զորավարժությունների նախապատրաստման շտաբային բանակցությունների կազմակերպչական աշխատանքները:
- Հունիսի 14-ից 18-ը ԱՄՆ ԱԴ Թմրամիջոցների դեմ պայքարի գործակալության և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության կողմից կազմակերպած դասընթացների իրականացման համար ցուցաբերվել է անհրաժեշտ օժանդակություն:
- Հուլիսի 6-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում ԱՊՀ անդամ պետությունների տարածքում կազմակերպված հանցավորության և հանցագործությունների այլ վտանգավոր տեսակների դեմ պայքարի համակարգման բյուրոյի հովանու ներքո կազմակերպվել և անցկացվել է միջազգային գիտագործնական առցանց համաժողով «Տեղեկատվական տիրույթի

գլոբալիզացիայի պայմաններում թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը հակազդելը. հիմնախնդիրները և հեռանկարները» խորագրով:

- Հուլիսի 13-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կազմակերպվել և անցկացվել է «Կոռուպցիայի հակազդման քրեաիրավական, քրեադատավարական և քրեաբանական հիմնախնդիրները» թեմայով առցանց միջազգային գիտագործնական համաժողովը:
- Սեպտեմբերի 13-ից 17-ը կազմակերպվել է Չեխիայի Հանրապետության ՆԳՆ Անվտանգության զարգացման ծրագրի շրջանակներում չեխական պատվիրակության ընդունելությունը ՀՀ ոստիկանության կրթահամալիրում:
- Համապատասխան կազմակերպչական աշխատանքներ են իրականացվել նոյեմբերի 29-30 ՀՀ ոստիկանության կրթահամալիրում «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում» թեմայով դասընթացը Երևանում ԵԽ գրասենյակի կողմից անցկացնելու համար:
- Կազմակերպվել են ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության ծրագրի, ԵԱՀԿ, Շվեդիայի թագավորության ոստիկանության և Բորդոյի դատական ոստիկանության ներկայացուցիչների այցերը ՀՀ ոստիկանության կրթահամալիր:
- Համատեղ միջոցառումների անցկացման վերաբերյալ աշխատանքային նպատակային պլաններ են ստորագրվել ՌԴ ՆԳՆ Ռոստովի իրավաբանական ինստիտուտի և Կրասնոդարի համալսարանների հետ:
- Ապահովվել է «edupolice.am» կայքէջում գիտական, մշակութային և այլ բնույթի 118 միջոցառումների լուսաբանումը՝ անգլերեն և ռուսերեն թարգմանություններով (Ն/Ժ 2020թ.՝ 91 նորություն):
- Պատշաճ կերպով պատասխաններ են ուղարկվել ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ էլեկտրոնային փոստով ստացված թվով 312 տեղեկատվական հարցումներին (Ն/Ժ 2020թ.՝ 641), ինչպես նաև facebook սոցիալական ցանցի միջոցով ստացված 323 հարցումներին:
- Կրթահամալիրի «www.edupolice.am» կայքէջում համալրվել են ստորաբաժանումների վերաբերյալ տեղեկությունները:
- Բաժնի կողմից աշխատանքներ են իրականացվել հանրության շրջանում կրթահամալիրի վարկանիշի բարձրացման ուղղությամբ՝ facebook և youtube սոցիալական ցանցերում՝ վարելով կրթահամալիրի էջերը:
- Բաժնի աշխատակիցները մասնակցել են Եվրոպական Միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալություն (ՍԻՊՈԼ) նոր կայքէջի գործարկման և կանոնակարգման նպատակով առցանց անցկացրած 5 հանդիպումներին, ինչպես նաև մասնակցել վերապատրաստման դասընթացի:
- ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի և Վոլգոգրադի ակադեմիայի հետ աշխատանքներ են իրականացվել 2022 թվականին երկկողմ առցանց դասընթացներ նախապատրաստելու ուղղությամբ:
- Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմի հեղինակած մեկ ռուսալեզու մենագրություն ուղարկվել է 5 երկրի թվով 9 գործընկեր կազմակերպություններին:
- Կրթահամալիրի Քոլեջի մեկ դասախոս ՌԴ ՆԳՆ Ռոստովի համալսարանի գործընկերների հետ իրականացրել է համատեղ հետազոտություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման աշխատանքների մասով կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Պարեկային ծառայության դասընթացների դիֆերենցված ստուգարքներ անցկացնելու նպատակով հիմնվել է նոր համակարգչային լսարան: Նշված լսարանի համար ապահովվել է Մուդլ /Moodle/ ցանցային հարթակի ծրագրավորումը, կիրառումը և անխափան աշխատանքը:
- Աշխատանքներ են իրականացվել կրթահամալիրի կողմից ձեռքբերվող տեխնիկական սարքավորումների նախագծման վերաբերյալ:
- Աշխատանքներ են իրականացվել կրթահամալիրում գործող ներքին ցանցի և համացանցի անխափան և անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով:
- Իրականացվել են Կրթահամալիրի սերվերի վերազինման և ծրագրավորման աշխատանքները:
- Արդիականացվել է համացանցի մուտքն ապահովող համակարգը:
- Կահավորվել է պարեկային ծառայությունում պաշտոնի նշանակվելու նպատակով ուսուցման երկրորդ հոսքի ընդունելության համար նախատեսված թեստավորման համակարգչային դահլիճը:
- Բաժնի աշխատակիցները ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ճանաչելիությունը բարձրացնելու նպատակով վերցրել են հարցազրույցներ, որոնք տպագրվել են «Պատիվ ունեմ» թերթում, կրթահամալիրի կայքէջում և սոցիալական ցանցերում:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի միջազգային համագործակցության և SS ներդրման բաժնի կողմից ռազմավարական պլանով նախատեսված միջոցառումների 2021թ. ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

1. **ՌՊ 1.1.6** - ՀՀ ոստիկանության Բենչմարքինգի քաղաքականությունը և ընթացակարգերը ընդունվել են 14.02.2018 թվականին, որից հետո հաշվետու ժամանակահատվածում, բենչմարքինգ իրականացնելու համար, բաժնի կողմից Ակադեմիային են փոխանցվել ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի կրթական ծրագրերը:
2. **ՌՊ 1.1.10** - Թարմացվել է edupolice.am կայքէջի «Որակի ապահովման գործընթաց» բաժնի տեղեկատվությունը: Կայքէջը ինտերնետ տիրույթում ունեցել է 256137 այցելություն:
3. **ՌՊ 1.2.4** - Թարմացվել է կայքէջի «Որակի ապահովման գործընթաց» բաժնի տեղեկատվությունը:
4. **ՌՊ 1.4.1** - Հիմնվել է Կրթահամալիրի «Մուդլ» հարթակը, որի միջոցով ուսումնական կենտրոնի «Ոստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորմամբ նախնական մասնագիտական կրթական ծրագրով սովորողները հանձնել են դիֆերենցված ստուգարքներ 10 առարկաներից:
5. **ՌՊ 3.2.2** - Կրթահամալիրը համագործակցության արձանագրություն է կնքել ՌԴ ՆԳՆ Օրյոլի իրավաբանական ինստիտուտի և Ուկրաինայի ՆԳՆ Օդեսայի պետական համալսարանի հետ, որոնցով նախատեսված են գիտահետազոտական աշխատանքների իրականացման հնարավորություններ: Միևնույն ժամանակ, Կրթահամալիրի Քոլեջի մեկ դասախոս ՌԴ ՆԳՆ Ռոստովի համալսարանի գործընկերների հետ իրականացրել է համատեղ հետազոտություն:
6. **ՌՊ 3.3.2** - ՌԴ ՆԳՆ Օրյոլի իրավաբանական ինստիտուտի և Ուկրաինայի ՆԳՆ Օդեսայի պետական համալսարանի հետ կնքված համագործակցության պայմանագրերի շրջանակներում կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմի համար հնարավորություն է ստեղծվել հրապարակվելու նշված կազմակերպություններին պատկանող պարբերականներում:
7. **ՌՊ 4.1.1** - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի «edupolice.am» կայքէջում իրականացվել է գիտական, մշակութային և այլ բնույթի 118 միջոցառումների լուսաբանում՝ անգլերեն և ռուսերեն

թարգմանություններով: Facebook սոցիալական ցանցում 1333-ով ավելացել են կրթահամալիրի էջի հետևորդները (ընդամենը 7834):

8. ՌՊ 4.1.2 - ՀՀ ոստիկանության նոր պարեկային ծառայության, ակադեմիայի, քոլեջի ընդունելությունների վերաբերյալ Կրթահամալիրի կայքէջում և Facebook սոցիալական ցանցում հրապարակվել են տեղեկատվական-գովազդային հայտարարություններ, ինչպես նաև ֆոտոնյութեր դիմորդների մասնակցությամբ: Կրթահամալիրի ճանաչելիության և վարկանիշի բարձրացման ուղղությամբ հրապարակվել և հեռարձակվել են կրթահամալիրի պետի հարցազրույցները «Վարկանիշ» ամսագրում և «Գավառ մեդիա» հեռուստաընկերության եթերում:

9. ՌՊ 4.1.3 - Համաճարակային իրավիճակով պայմանավորված միջոցառումները չեն իրականացվել:

10. ՌՊ 5.1.1 - Կրթահամալիրը համագործակցության արձանագրություն է կնքել ՌԴ ՆԳՆ Օրյոլի իրավաբանական ինստիտուտի և Ուկրաինայի ՆԳՆ Օդեսայի պետական համալսարանի հետ: Համագործակցության ծրագիր է իրականացվել Չեխիայի ոստիկանության կրթության և վերապատրաստման վարչության հետ համատեղ:

11. ՌՊ 5.1.3 - Հաշվետու ժամանակահատվածում կրթահամալիրի 9 ծառայողներ մասնակցել են Չեխիայի Հանրապետությունում իրականացված վերապատրաստման դասընթացներին: Բացի այդ, կրթահամալիրի ինը ծառայող և մեկ ուսանող մասնակցել են ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի, Բելառուսի Հանրապետության ՆԳՆ Մոգիլյովի, Ղազախստանի Հանրապետության ՆԳՆ Ալմաթայի և Կարագանդայի, ՌԴ ՆԳՆ Կառավարման և Վոլգոգրադի ակադեմիաների, ինչպես նաև Չինաստանի ազգային անվտանգության համալսարանի կողմից կազմակերպված առցանց և հեռակա կարգով անցկացված համաժողովներին և այլ միջոցառումներին:

12. ՌՊ 5.1.5 - Միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժինն աշխատանքներ է իրականացրել ուսումնական ստորաբաժանումների և գիտական բաժնի միջոցով պատշաճ կերպով իրազեկելու կրթահամալիրի անձնակազմին և սովորողներին արտասահմանյան գիտական հանդեսներում տպագրվելու և միջազգային այլ միջոցառումներին մասնակցելու հնարավորությունների վերաբերյալ: Ակադեմիայի վճարովի ուսուցման 4-րդ կուրսի մեկ սովորող մասնակցել է ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի կազմակերպած առցանց համաժողովին:

13. ՌՊ 5.2.1 - Համաճարակային իրավիճակով պայմանավորված միջոցառումները չեն իրականացվել:

14. ՌՊ 5.2.2 - Կրթահամալիրի ՊԴ կազմի 8 ներկայացուցիչներ ճանաչողական այց են կատարել Չեխիայի Հանրապետության ոստիկանության Կրիմինալիստիկայի ինստիտուտ:

15. ՌՊ 5.2.3 Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմի հեղինակած 5 նյութերը (այդ թվում արտասահմանյան գործընկերների հետ համահեղինակությամբ) տպագրվել են արտասահմանյան (ՌԴ, Բելառուսի և Ղազախստանի Հանրապետությունների ՆԳՆ բուհերի) հանդեսներում:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիր-ժամանակացույցով իրականացված աշխատանքներ

2.3.3.Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի կողմից ստացված տեղեկատվության հիման վրա պաշտոնական կայքում նոր բաժնի բացում:

Սահմանված քայլի իրագործման նպատակով միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի նախաձեռնությամբ Կրթահամալիրի ենթակա ստորաբաժանումներում անցկացավել է հարցում: Արդյունքում Որակի ապահովման բաժանմունքի տրված առաջարկության հիման վրա Կրթահամալիրի կայքէջի ցանկում ավելացվել է «Մեր մասին» բաժինը, որտեղ ներառված է Կրթահամալիրի պատմությունը: Միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի նախաձեռնությամբ իրականացված բանավոր հարցման արդյունքում Կրթահամալիրի կայքէջի «Միջազգային կապեր և համագործակցություն» բաժնում ավելացվել է «CEPOL» ենթաբաժինը, որտեղ ներկայացված է Եվրոպական Միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (CEPOL) վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև «LEED» էլեկտրոնային հարթակին միանալու հղումը: Նշված հարթակը հնարավորություն է ընձեռում մասնակցելու վերապատրաստման բազմաթիվ առցանց դասընթացներին:

3.6.2. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ համագործակցող բուհերի հետ իրականացնել ՊԴ կազմի փոխանակման հստակ ծրագրեր և արդյունքների հիման վրա իրականացնել բարելավման աշխատանքներ:

Աշխատանքների իրականացումը տեղափոխվել է 2022 թվական:

8.2.1. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ վերանայել Կրթահամալիրի պաշտոնական կայքէջը՝ ՄԿԾ վերաբերյալ առավել ընդգրկուն տեղեկատվություն տարածելու համար:

Կրթահամալիրի պաշտոնական կայքէջում ավելացվել և թարմացվել են ՄԿԾ-ների վերաբերյալ տեղեկատվությունը: Տեղադրվել և թարմացվել են Կրթահամալիրի ակադեմիայի ամբիոնների շուրջ 216 տեղեկատվություն, որոնցից 194 ՄԿԾ-ներ, ինչպես նաև թարմացվել է Կրթահամալիրի քոլեջի պատմությունն ու Ուստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի պատմությունը:

8.2.2. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ կայքէջի միջոցով ապահովել բոլոր տիրույթներում Կրթահամալիրի գործունեության թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կայքէջի միջոցով բոլոր տիրույթներում ապահովվում է Կրթահամալիրի գործունեության թափանցիկությունն ու հասանելիությունը հասարակությանը: Հաշվետու ժամանակահատվածում Կրթահամալիրի կայքէջում հրապարակվել է թվով 90 հոդված և հայտարարություն: Թարմացվել են նաև Կրթահամալիրի գործունեության վերաբերյալ այլ տեղեկությունները (համագործակցող բուհեր, առարկայական նկարագրեր, ամբիոնների մասին տեղեկատվություններ, հաշվետվություններ):

8.2.3. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ Կայքէջում ավելացնել անգլերեն և ռուսերեն լեզուներով տեղեկատվությունը:

Կրթահամալիրի պաշտոնական կայքէջում տեղ գտած նորությունները թարգմանվել են ռուսերեն և անգլերեն լեզուներով: 2021թ. առաջին կիսամյակում թարգմանվել են թվով 75 Կրթահամալիրի իրականացված միջոցառումների վերաբերյալ նորություններ, կարգեր և այլ տեղեկատվություն:

8.3.2. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ Իրականացնել Կրթահամալիրի կայքէջի և ֆեյսբուքյան պաշտոնական էջին ուղղված հարցերի ուսումնասիրություն և վերլուծություն:

Ուսումնասիրվել, վերլուծվել և պատշաճ կերպով պատասխանվել են «www.edupolice.am» կայքի «Հաճախ տրվող հարցեր» և info@edupolice.am էլեկտրոնային հասցեներին, ինչպես նաև ֆեյսբուքյան էջի միջոցով ստացված թվով 258 հարցումների, որոնց 99% վերաբերում էր ընդունելության գործընթացին, իսկ 1% կադրային և այլ բնույթի հարցեր էին:

8.4.2. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ Մշակել Կրթահամալիրի հանրային կապերի զարգացման հայեցակարգից բխող մեխանիզմների ներդրման ընթացակարգեր:

Չի իրականացվել:

9.1.1. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ Անգլերենին տիրապետող մշտական և փոփոխական անձնակազմի մինչև 10% ավելացում:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում 2021թ. մայիսի 6-ից յուրաքանչյուր հինգշաբթի ժամը 16:00-17:00 անցկացվում է անգլերենի դասընթաց A2 մակարդակ ունեցող աշխատակիցների համար: Դասընթացին մասնակցում է թվով 13 աշխատակից, որոնցից երեքը՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմից, 10-ը՝ ուսումնաօժանդակ: Դասընթացը վարում է Կրթահամալիրի միջազգային համագործակցության և SS ներդրման բաժնի տեսուչ, ոստիկանության կապիտան Ա. Ղուկասյանը: Կրթահամալիրի մեկ աշխատակից մասնակցել է անգլերենի առցանց դասընթացներին CEPOL-ի LEED հարթակում:

9.2.3 Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրման խթանում և կիրառում ՄԿԾ-ներում:

Կրթահամալիրի թվով 9 ծառայողներ մասնակցել են վերապատրաստման դասընթացներին Չեխիայի Հանրապետության ՆԳՆ համապատասխան կառույցներում, որի վերաբերյալ ներկայացվել են հաշվետվություններ հստակ առաջարկներով՝ Կրթահամալիրի ուսումնական ծրագրերում, ինչպես նաև ոստիկանության գործունեության մեջ առաջավոր փորձը կիրառելու համար:

9.2.4. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ կրեդիտային շարժունության իրականացման նպատակով գործընկեր բուհերի հետ համագործակցության պլանի մշակում:

Համաճարակային իրավիճակի պատճառով նշված կետը չի իրականացվել:

9.4.1. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ օտարերկրյա և դիմորդների ներգրավման աշխատանքների խթանում՝ կայքէջում Կրթահամալիրի գործունեության վերաբերյալ օտար լեզվով տեղեկատվության ապահովմամբ:

Կրթահամալիրում օտար լեզուներով ուսումնական ծրագիր չի իրականացնում, ինչի պատճառով վերը նշված կետի պահանջները չեն իրականացվել:

9.4.2. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ Կրթահամալիրի միջազգային ճանաչելիության ապահովում:

Կրթահամալիրը համագործակցության արձանագրություն է կնքել ՌԴ ՆԳՆ Օրյոլի իրավաբանական ինստիտուտի և Ուկրաինայի ՆԳՆ Օդեսայի պետական համալսարանի հետ, որոնցով նախատեսված են գիտահետազոտական աշխատանքների իրականացման հնարավորություններ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում ԱՊՀ անդամ պետությունների տարածքում կազմակերպված հանցավորության և հանցագործությունների այլ վտանգավոր տեսակների դեմ պայքարի համակարգման բյուրոյի հովանու ներքո կազմակերպվել և անցկացվել է միջազգային

գիտագործնական առցանց համաժողով «Տեղեկատվական տիրույթի գլոբալիզացիայի պայմաններում թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը հակազդելը. հիմնախնդիրները և հեռանկարները» խորագրով:

9.5.1. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ առաջատար ԲՈՒՀ-երի հետ համեմատական վերլուծության /բենչմարքինգի/ իրականացում:

Միջազգային համագործակցության և SS ներդրման բաժնի կողմից աջակցություն է ցուցաբերվել քոլեջի հասարակագիտական առարկաների և հոգեբանության ամբիոնի դասախոս, ոստիկանության մայոր Մ. Կարապետյանին որակի բարելավման շրջանակում առաջատար բուհերի հետ համեմատական վերլուծության (բենչմարքինգ) իրականացման գործընթացում ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանից հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության ստացման ուղղությամբ:

9.5.2. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ Համագործակցող բուհերի հետ կազմել համատեղ միջոցառումների տարեկան պլան:

Կնքվել է տարեկան միջոցառումների իրականացման պլան «Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության Ռոստովի իրավաբանական ինստիտուտ» բարձրագույն կրթության դաշնային պետական հաստատության և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի» միջև: Նշված պլանի շրջանակներում իրականացվել է մեկ համատեղ գիտական հետազոտություն, ինչպես նաև «Ռոստովի իրավաբանական ինստիտուտի» ներկայացուցիչը մասնակցել է Կրթահամալիրի կողմից կազմակերպված «Կոռուպցիայի հակազդման քրեաիրավական, քրեադատավարական և քրեաբանական հիմնախնդիրները» թեմայով առցանց գիտագործնական համաժողովին:

Կնքվել է 2022 թվականի տարեկան միջոցառումների իրականացման պլան «Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության Կազանի իրավաբանական ինստիտուտի» բարձրագույն կրթության դաշնային պետական հաստատության և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի» միջև:

9.5.3. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ Իրականացված բենչմարքինգի տվյալների հիման վրա ներդնել լավագույն փորձը:

Կրթահամալիրի իրավասու ստորաբաժանումների կողմից բենչմարքինգ չի իրականացվել:

9.7.1. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ ՊԴ կազմի և սովորողների մասնակցություն շարժունության ծրագրերին՝ Կրթահամալիրի գործող երկկողմ միջազգային պայմանագրերի և միջազգային այլ ծրագրերի միջոցով:

Աշխատանքներ են տարվում 2022 թվականի ընթացքում Կրթահամալիրի դասախոսների կողմից ՌԴ ՆԳՆ Վոլգոգրադի ակադեմիայի սովորողների համար առցանց դասախոսությունների շարք կազմակերպելու համար:

10.7.1. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ Կրթահամալիրի կայքը պարբերաբար թարմացնել ՈԱ գործընթացների վերաբերյալ տեղեկատվությամբ:

Թարմացվել են ամբիոնների առարկայական նկարագրերը:

10.7.2. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ ՈԱ գործընթացների առավել ընդգրկուն լուսաբանման համար ստեղծել առանձին էլեկտրոնային հարթակ (պորտալ)

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պաշտոնական կայքէջում երկու տարի է ինչ գործում է «Կրթության որակի ապահովման գործընթաց» բաժինը, որտեղ ամփոփված են Որակի ապահովման եվրոպական չափորոշիչները և ուղենիշները, ազգային կենտրոնի գնահատման չափանիշները, հավատարմագրման մասին տեղեկատվություն, կրթության որակի ապահովման հանձնաժողովի կանոնակարգը և այլ տեղեկատվություն: Նշված բաժինը ամբողջությամբ համապատասխանում է Որակի ապահովման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության լուսաբանման չափանիշներին:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական
և զարգացման վարչության միջազգային համագործակցության
և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի պետ,
ոստիկանության փոխգնդապետ Գ.Դավթյան

«09» 02 2022թ.